ՆԱԻՐԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտ
Բան. գիտ. թեկն., դոցենտ
nairahambardzumyan@yahoo.com

ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆԸ ԲԱՆԱՍՏԵՂԾ

Բանալի բառեր և արտահայտություններ. գեղագիտություն, քերթված, մահվան փիլիսոփայություն, տեսիլք, իրականություն, բանաստեղծ, ժողովածու, սփյուռքահայ գրականություն:

Ключевые слова и выражения: эстетика, стихотворчество, философия смерти, видение, реальность, поэт, сборник, литература армянской диаспора.

Key words and expressions: aesthetics, poetry, philosophy of death, vision, reality, poet, collection, literature of the Armenian diaspora.

Նախաբան

Պատկերի, լեզվի ու զգայությունների նորություններով սփյուռքահայ բանաստեղծության մեջ իր ուրույն տեղն ունի Մուշեղ Իշխանը: Իշխանի առաջին քերթվածը տպագրվել է 1932 թվականին «Հայրենիք» ամսագրում, առաջին՝ «Տուներու երգը» բանաստեղծական ժողովածուն լույս է տեսել Բեյրութում՝ 1936 թվականին: Հայաստանում Մուշեղ Իշխանի քերթվածները առաջին անգամ տպագրվել են գրականագետ Վազգեն Գաբրիելյանի կազմած «Սփյուռքահայ բանաստեղծություն» անթոլոգիայում (ԵՊՀ հրատ., 1981, 18 բանաստեղծ. և փոքրիկ կենսագրական), իսկ առանձին գրքով Իշխանը առաջին անգամ հայրենիքում ներկայացվել է 1990 թվականին՝ «Երկեր» ժողովածուով ու կրկին Վազգեն Գաբրիելյանի նախաձեռնությամբ, որի կազմմանն ու ձևավորմանը մասնակցել ու աջակցել է նաև Մուշեղ Իշխանի երևանաբնակ քույրը՝ Հուրիկ Ճենտերեճյանը: Սույն ժողովածուում ընդգրկվել են Մուշեղ Իշխանի լավագույն գործերը, պահպանվել է ժամանակագրությունը: Ժողովածուն ստեղծվել է Իշխանի պոեզիայի գերակշիռ արժեքավոր հենքին, իսկ մասնակի կրճատումները արվել են սոսկ ծավալային նկատառումներով: Մուշեղ Իշխանը հեղինակ է նաև «Տուներու երգը» (1936), «Կրակը» (1938), «Կեանք ու երազ» (1949), «Ողջո՛ւյն քեզ, կյանք» (1958), «Ոսկի աշուն» (1963), «Տառապանք» (1968), «Արեւամար» (1986), «Իրիկնալոյս ռումբերու տակ» (1991), «Ուխտագնացություն» (1994), «Նամակ Կաղանդ պապային» (1999) քնարախոհական բանաստեղծական ժողովածուների, «Հայաստան» (1946) քնարական պոեմի:

Մարդերգությունը

Մուշեղ Իշխանը «Տառապանք»[1] ժողովածուի համար որպես բնաբան ընտրել է արաբ բանաստեղծ և փիլիսոփա Աբու Էլ Ալա Էլ Մաարիի[2] (973-1057)՝ «Մենք կը տառապինք: Եվ ասիկա միակ բանն է: Զոր վստահ գիտենք» հայտնի տողը, որը հանգեցնում է գաղափարին, թե Իշխանն իր ժողովածուի խորագիրն ընտրել է՝ հետամուտ Մաարիի աներկբա իմաստությանը: Մարդը Մուշեղ Իշխանի պոեզիայում կենսաբանորեն ու պատմականորեն ձևավորված աշխարհաքաղաքական սուբյեկտն է, աշխարհաքաղաքացի հայը, ով, որպես լիիրավ գոյություն, ամփոփում է կենսաբանական, հոգեբանական ու բարոյագիտական, իմացաբանական, մշակութաբանական ու սոցիալ-քաղաքական գաղտնագրերը, և «Տառապանք» ժողովածուի ամբողջականության տիրույթում մարդուն դիտարկելիս հայտնաբերում ենք մեթոդաբանական այն հիմքը, ըստ որի՝ հնարավոր է ոչ միայն տեքստի առանձին հատկանիշների ուսումնասիրությունը, այլև՝ մարդու՝ որպես մարդագիտական սուբյեկտի՝ համամարդու բացահայտումը, ում սպառնում է արմատի քայքայումը, ում սպառնում են անհող-անհայրենիք թափառումները:

Այս համատեքստում՝ ժողովածուի ներքին տեղաշարժերն ընդգծում են ազգային և համամարդկային արժեքների ու իդեալների կենսագործմանը հետամուտ և ուծացման վտանգի դեմ պայքարող տարագիր հային, ում մարդաբանական ու գենետիկական հարցադրումների տիրույթում դիտարկելիս՝ բացահայտվում է նաև Մուշեղ Իշխանի մարդաբանական-գեղագիտական որոնումների հիմքը:

Ժողովածուում ընդգրկված բանաստեղծություններում սփյուռքահայ պոետի և ազգապահպանի էությունն է, նրա գիրը ուղղորդող հոգևոր-բարոյական առանցքային դրույթերի գիտակցությունը, ու նաև՝ դրանք տեսականորեն ու գործնականորեն իրագործելու հետևողականությունը:

---

[1] Իշխան Մուշեղ, Տառապանք, 1968, Անթիլիաս, Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 116 էջ: «Տառապանք» ժողովածուն Մուշեղ Իշխանի պոեզիայի բարձրակետն է: Այն արժանացել է «Գէորգ Մելիտինեցի» գրական առաջին մրցանակին: Սույն ժողովածուի տարբեր քերթվածներ տեղ են գտել Արթուր Մեսչյանի երգացանկում:

[2] . Abul ʿAla Al-Maʿarri - (Arabic - أبو العلاء المعري Abū al-ʿAlāʾ al-Maʿarrī, full name أبو العلاء أحمد بن عبد الله بن سليمان بن داود التنوخي المعري Abū al-ʿAlāʾ Aḥmad ibn ʿAbd Allāh ibn Sulaimān al-Tanūḫī al-Maʿarrī), (December 973-May 1057). He was a blind Arab philosopher, poet, and writer. Al-Maʿarri held and expressed an irreligious worldview which was met with controversy, but in spite of it, he is regarded as one of the greatest classical Arabic poets.

Ժողովածուի՝ գրեթե բոլոր քերթվածներն իրենց ներքին տիրույթներում ամփոփում է ջարդերի ու նահատակությունների ճանապարհներով անցած հայի տառապանքը: Ցեղասպանների ոճիրը խափանել է երազը, սակայն Իշխանի կերպարը՝ որպես հայ մարդ, հպարտ է և ունի սեփական ինքնության գիտակցությունը: Իշխանի՝ կենսականությամբ շնչող քերթվածներում կան հերոսական խոյանքներ, պայքարի ու ընդվզման հզոր ոգի, ապագայի հավատք, ստրկության լուծը թոթափելու փորձ: Նրա ցավն ու տառապանքը, կորուսյալ հայրենիքի կարոտն ու պաշտամունքը, ուժն ու փառքը համամարդկային են՝

Սիրտս կ՝արյունի աշխարհի ցավով,
Որքա՜ն տառապանք, Աստվա՜ծ իմ, չորս դիս,
Կյանքի դաշտերեն փչող ամեն հով
Հառաչ ու կսկիծ կը զարնե դեմքիս:

Անմեղ զոհերու արյունով եռուն
Հողը ոտքիս տակ կը մնա միշտ թաց,
Եվ նոր ոճիրներ, իմ շուրջն ու հեռուն,
Կը ծնին մարդիկ՝ արյունով հարբած[3]:

Սույնը ուղերձ է, որով բանաստեղծը դիմում է պարզ ու աննահանջ, բայց և միաժամանակ տարօրինակ, անհասանելի ու անհասկանալի մարդուն, դիմում է ցավի ու հավատքի, սուգի ու «տմույն» արցունքների քողից անդին արշալույսին նայող մարդուն՝ «Կը խարխափես և խավարին չես հավատար», «Կը տառապիս և վշտերուդ չես հավատար», «Կը խեղդըվիս՝ շղթաներուդ չես հավատար», «Ցավեդ կ՝ոռնաս և ցավերուդ չես հավատար»[4]: Մահվան անմիջական շունչը տարբերակող բանաստեղծի արտասովոր այս ապրումը միտում է հավերժական իմաստնության, ինչը սոսկ կենսափորձի տիրույթում չէ, այլ վեր է կյանքի ու մահվան փիլիսոփայությունից, առավել հանդուգն ու անվերապահ է, ինչպես Պետրոս Դուրյանի պոռթկացող տառապանք-ցասումը, որով նա հանդգնում էր դիմելու Աստծուն: Հոգու լույսերը, սակայն, չեն մարում, ու բանաստեղծը անեծք չունի իր շուրթերին՝

Տարօրինա՜կ, տարօրինա՜կ մարդ արարած,
Քու ձեռքերով հողին կուտաս կյանքեր ծաղկած,

---

[3] Իշխան Մուշեղ, Տառապանք, 1968, Անթիլիաս, Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, էջ 8: Նույնը՝ Իշխան Մուշեղ, Երկեր, Եր., «Նաիրի» հրատ., 1990, էջ 187:

[4] Նույն տեղում, էջ 93, Երկեր, էջ 2 2 8:

Կ՝զգաս դեմքիդ մահվան քամին և հողմավար
Կ՝իյնաս անշունչ, սակայն մահվան չես հավատար…[5]:

Մարդը Իշխանի պոեզիայում բնության անտրոհելի մի ատոմ է, ով մշտապես տիեզերական համակարգայնության ու հավերժական պտույտ-դարձումում է: Իշխանը որոնում է մարդու հոգու հավերժացումը: Նա երգում է տառապանքի վիհերում գալարվող ու միևնույն ժամանակ նույն տառապանքի լեռն ի վեր աղոթքով ու երգով ելնող բազմաչաչար, բայց «վիշապահաղթ աղամորդու» աննկուն ոգին՝

Կը սիրեմ քեզ, Ադամորդի՛,
Կուրծքեդ արյուն երբ կը հոսի,
Աչքեդ՝ արցունք, ցավ ու կրակ,
Շրթունքներուդ՝ այրող պապակ,
Կ՝երգես աղոթք ու մեղեդի,
Կ՝երգես կյանքի փառաբանանք
Եվ լեռն ի վեր տառապանքի
Դուն կը մնաս այդպես ոտքի[6]:

«Տառապանք» ժողովածուով Իշխանը բացահայտում է հողեղեն և աշխարհիկ կյանքի ունայնությունը, մոտենում համաստվածության գաղափարին, տիեզերական անվախճանական շարժումին, ուր նախա-սկիզբը ես-ն է, անդինը՝ Աստված: Ժողովածուի նյութը խիտ է, անպարագիծ, ոգին՝ սահմանազերծ, որի միջոցով էլ Իշխանը փոխանցում է նյութը՝ ձևից իմաստը, տեսիլքից՝ խորհուրդը, անհունից՝ իրականություն ու իրականությունից՝ դեպի գաղափար: Իշխանը բանաստեղծ է և փիլիսոփա: Նա արվեստագետ է, ով մտածում է, խորհում ու տառապում՝ մերձենալով տիեզերքից տրվող տեսիլքներին: Իշխանը խոհի բանաստեղծ է: «Տառապանք» ժողովածուում տեղ գտած քերթվածները մտքի և հոգու միասնականության արդյունք են, որոնց միջոցով նա բերում է կյանքի ու մահվան փիլիսոփայության, ունայնության ու հավերժության խորհուրդները, իրականություն-ցնորքի մեջ որոնում է մարդուն՝

Ցնորք է գուցե մեր շուրջ ամեն բան,
Աչքերը մարդուն՝ խաբկանքի պաստառ,
Անցքերն աշխարհի՝ լոկ շարժանկար,
Ցնորք է գուցե մեր շուրջ ամեն բան[7]:

---

[5] Իշխան Մուշեղ, Տառապանք, 1968, Անթիլիաս, Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, էջ 93, Երկեր, էջ 2 2 8:
[6] Նույն տեղում, էջ 96, Երկեր, էջ 2 2 9:

Խոհափիլիսոփայական պատկերների ընդգրկունությունն ու տարողությունը, դրանց խորհուրդն ու խորքը ժողովածուում դառնում են ընթերցումի գլխավոր տարրեր՝ բնորոշելով Իշխանի բանաստեղծության՝ ժամանակի տիրույթում մնալու, գրվածքին կենսականության և ընթերցողին էներգիա հաղորդելու էական հարցերը: Նյութը ու պատկերները ներձույլ են Իշխանի քերթվածներում՝ գույների թանձրությամբ ու ձայների ներդաշնակ կերպափոխությամբ: Երևակայության թռիչքով Իշխանը սովորական մահկանացուին անհասանելի իմաստասիրության բարձրագույն ոլորտներում է, որոնք անտեսանելի, սակայն կարևոր լույս են սփռում նրա կյանքի ու հոգեկան բախումների վրա՝ երբեք չխախտելով բնականության ու բանականության օրենքները: Իր ամբողջության մեջ «Տառապանք» ժողովածուն անմահության ու անհունության հասնելու ձգտում է, մարդու՝ որպես բարձրագույն բանական էակի, ուղեորոնումն է՝ աննյութեղենության ու ոգեղենացման, անձ-տիեզերականություն ներդաշնության ճանապարհին: Այդ կերպ՝ Իշխանը խորշում է կենցաղից, նյութից ու նյութականությունից՝ ամեն ինչ հասցնելով ոգու տիրույթ: Նա ոգու բանաստեղծ է՝

Երբ հանդիպինք օր մը հանկարծ մենք իրար,
Աստղաբնակ իմ եղբայր,
Ու երբ սիրով նստինք սեղան միասին,
Երկու լեցուն բաժակի շուրջ աստղային,
Ինչպե՞ս պատմեմ, որ հասկանաս ամեն բան,
Որ մեր երկրին մեջ էր Ադամն ու Եվան,
Որ կը կոչվինք մենք հոն ՄԱՐԴ,
Մեր մեջ ունինք շունչն Աստուծո սրբավանդ,
Ունինք հոգի բանական
Եվ մենք ենք տերն ու արքան
Բոլոր շնչող, բոլոր թռչող կենդանյաց[8]:

Մուշեղ Իշխանի բանաստեղծությունները կյանքի, մահվան ու հավերժության գաղափարներով ամփոփ իմաստասիրական հարցադրումներ են, որոնց պատասխանները չունի և ոչ մի մահկանցու: Իշխանի «Տառապանք» ժողովածուն ձևով ու արվեստով առանձնահատուկ է: Ժողովածուի ամեն մի էջում գրողը ստեղծում է լույսի ու ստվերի

[7] Իշխան Մուշեղ, Տառապանք, 1968, Անթիլիաս, Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, էջ 5, Երկեր, էջ 185:
[8] Իշխան Մուշեղ, Տառապանք, 1968, Անթիլիաս, Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, էջ 63, Երկեր, էջ 2 16:

ներդաշնությունը, թանձրացնում իրականության զգացողությունը՝ նրանում ամփոփելով համամարդկային հույզեր ու զգացողություններ: Ու մահը նրա քերթվածներում ոչ թե մահկանացուական կյանքի ավարտն է, այլ՝ անմահության ճանապարհը: Ըստ նրա՝ մարդկային կյանքը տիեզերական արարչագործության, հավերժականության ու ոգեղենացման ճանապարհն է՝ ես-ից՝ ընդհանրականը, շոշափելիից՝ անշոշափելին, նյութեղենից՝ ոգեղենություն: Նա տերն է այդ գաղափարի ու չի վախենում մահից՝

Մահը միշտ կար, երբ կ՝երթայինք միասին,
-Հուղարկավոր վշտահար -
Մահվան զոհեր հանձնելու սև սա հողին,
Սակայն չէի հավատար:

Իսկ երբ հանկարծ, օ՜, ահավոր առեղծված,
Դեմքիդ վրա զայն տեսա,
Ինձի, ավա՜ղ, ըսին աչքերդ սառած,
Թե իսկապե՛ս մահը կա[9]:

Գրականությունը իրականության ճանաչողությունն է, ու ամեն գրող այդ իրականությանը մասնակից է իր հոգևոր աշխարհի ու կարողությունների չափով: Այս իմաստով Մուշեղ Իշխանի «Տառապանք» ժողովածուն բովանդակությամբ ու արվեստով անօրինակ է: Մուշեղ Իշխանը ինքնատիպ հեղինակ է: Նա գրում է ոչ թե անձնական, այլ առավելապես ազգային ու համամարդկային ապրումների ու հույզերի մասին: Դրանք հեղինակի էությունից անջատվող անանձնական ու կերպափոխվող արձագանքներ ու թրթիռներ են: Խոհի ու պատկերի միասնությունը՝ գրի իրականությունը, գրողն ամփոփում է բառերում: Իշխանի քերթվածները ունեն մնայուն արժեք ու իրենց ներքին տիրույթում կրում են նրբաճաշակ արվեստագետ-բանաստեղծի ոգին ու իմաստասերի միտքը:

Մարդկային բարոյահոգեբանական ըմբռնումներն ու աշխարհայեցողությունը Իշխանը գեղարվեստականորեն մարմնավորում է պոետիկական միջոցներով: Դրանք նրա սեփական էության ու խառնվածքի ծնունդ են: Իշխանը կարողանում է թափանցել մարդու ներաշխարհը, զննել քնարական կերպարի ու իրականության բարդ կապերը՝ հասնելով խորքերը: Սույն հարցերը պոետիկայի և գեղարվեստական արտահայտչաձևերի ոլորտում խիզախող հեղինակի հավակնությամբ չեն

[9] Նույն տեղում, էջ 14, Երկեր, էջ 191:

լուծվել, քանի որ նա միշտ էլ ձգտել է նոր ու թարմ միջոցներ փնտրել, գտնել ասելիքը ընթերցողին մատուցելու ոչ կաղապարված եղանակներ: Իշխանի պոեզիան անշփոթելի է: Կառուցվածքային ձևերն ու հնարքները ինքնատիպ են, մտածողության արտահայտման կերպերը՝ յուրօրինակ ու հետաքրքիր: Ոճը պարզ է, թեպետ մտածողությունը միտում է փիլիսոփայական ակտիվ ներթափանցումների: Աշխարհաճանաչողությունը ընդգրկում է մի կողմից մարդու զգացողությունների հակասականությունը, մյուս կողմից ընդհանրացնում է մտքերը:

Մայրերգությունը

«Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» ինքնակենսագրական վեպում Վահան Թոթովենցը կերպավորում է մորը որպես բարության, խոնարհության, աստվածապաշտության ու քրիստոնեական հավատքը կրողի՝ «Կոծում են հողմերը: Աշխարհը ցուրտ է: Փակեցե՛ք դուռը աշխարհի դեմ: Բայց մայրս ժպտում է մեր կապույտ լեռներից բարձրացող արևի միջից, տեսնում եմ նրա ծամերը արևի շողերին խառնված և լսում եմ նրա շողերի ձայնը: <...> Եվ բացվում է մի մե՛ծ առավոտ, որի թևերը ոսկեզօծում են իմ հոգու մռայլ ափունքները»[10]: Մի նուրբ նմանություն կա Վահան Թոթովենցի ու Մուշեղ Իշխանի՝ հարազատների հանդեպ տածած սիրո միջև: Մուշեղ Իշխանը մեկ անգամ է տեսել մորը: Նրա մայրը, Թոթովենցի մոր պես, հավատավոր է, բարեպաշտ, նրբազգաց ու սիրառատ: Թոթովենցյան արևի ու լույսի տենչանքը կամ պոետական մետաֆորը Իշխանի մոտ զարգանում է համազոր թափով, քանի որ միայն մորն ունի հավատավոր ու լուսավոր այս աշխարհի լույսի տակ: Խնդիրն այն չէ լոկ, որ երկու արվեստագետներն էլ չափազանց քնքշորեն են արտահայտում սերը մոր հանդեպ, այլ, որ երկուսի մոտ էլ մայրը, հայրը և մյուս հարազատները խոր հետք են թողել: Նրանց աշխարհաճանաչողության հիմքում էական մի կողմնորոշում է. այդ անդրադարձումներում Իշխանը հասնում է կարծես ներքին մի խաղաղության, ինչպես Թոթովենցը, երբ գրում է Միսաք Մեծարենցով պատանեկության տարիներին ունեցած հափշտակության մասին՝ «Երբ մրսում եմ այս աշխարհում, մեծ պատանի՛, գրկում եմ քո երգերը, և ահա արևը, քո երգած արևը, սուզվում է իմ ցուրտ հոգու մեջ կաթիլ առ կաթիլ» [11]:

«Մամիկը» քերթվածում Իշխանը պատկերում է տոհմիկ հայ կնոջը, նրա բարությունն ու շնորհները՝ ամբողջացնելով ու մանրամասնորեն

[10] Թոթովենց Վահան, Երկեր երեք գրքով, գիրք 1, Եր., «Սովետական գրող», 1988, էջ 386-387:

[11] Նույն տեղում, էջ 483:

գծագրելով նրա առաքինությունը ու առանձնացնելով հատկանիշներ, որ բնորոշում են որդեկորույս հայ մամիկին՝

Մենավոր խուցին մամիկը մենիկ
- գաղտնի՛ք է, գաղտնիք -
Թե ինչպե՛ս կ՝ապրի շուքի պես անձայն,
Սպիտակահեր և կորաքամակ
Իբրև ուրվական:
Ո՛չ օճախ ունի և ո՛չ ալ ճրագ,
Կյանքին դեմ փակած դուռ ու պատուհան,
Իր խուցը թշվառ սպասման կայան,
Մինակ, միս մինակ,
Կ՝սպասե մահվան…[12]:

Պոետական այս միջոցներով ահա Իշխանը կերտում է արշիլգորկիական մի բնավորություն, որն իր ներքին տիրույթում խտացնում է անանձնական, բայց խորը այն ներհակությունը, որ գոյություն ունի բանաստեղծ-իրականություն միջակայքում: Իրավամբ՝ մայրերգու հզոր բանաստեղծներից՝ Շիրազից, Իսահակյանից հետո դժվար է նորն արարելը հայ պոեզիայում, քանի որ մայրական խոհը և ապրումը այս երկու հզորների պոեզիաներում աստվածաշնչյան իմաստնության ու փիլիսոփայության, մայր հողի խորհրդանիշի ու կատարելության գաղտնիքի հայտնաբերումներ են: «Մայրս թաղվեցավ հայ հողի մեջ, հողն ալ քիչ մը անուշցավ»,- գրում է Մուշեղ Իշխանը՝ ամփոփելով եկեղեցու զանգակի ու խունկի կախարդանքով արբած մանկության հիշատակները, մտածումներն ու զգացումները, ասդինից անդին ձգվող հոգու տագնապը: Մանկության այսօրինակ տպավորություններն ու հուշերը ապրում են Մուշեղ Իշխանի քերթվածներում՝ դառնալով երգ ու սեր, բանաստեղծությամբ վերածնվող գեղանկարներ: Մայրական սերն ու կարոտն անթեղված են Իշխան-բանաստեղծի հոգում: Ու որպեսզի հայրենի հողը դառնա ավելի իմաստուն ու խոհական, որպեսզի հայրենի հողի համար պայքարեն, ուրեմն այն պետք է ամփոփի մոր նշխարները: Սույնը գաղափար է, որ, հայտնագործություն լինելուց զատ, Իշխան-բանաստեղծի հավատամքն է, քանի որ որդիական նրա կարոտը երկատված ճակատագրի նախապատմությունն ունի: Երազները, իղձերը, մայրական սերը սովորական պարզունակ շրջանակներ չեն Իշխանի բանաստեղծու-թյուններում, ինչպես հաճախ հանդիպում ենք այլոց մոտ, այլ՝ հուզումների,

[12] Իշխան Մուշեղ, Տառապանք, 1968, Անթիլիաս, Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, էջ 16: Նույնը՝ Իշխան Մուշեղ, Երկեր, Եր., «Նաիրի», 1990, 192 :

զգացումների ու անսպառ սիրո աղբյուր: Ավելին, Իշխանն այդ զգացումներն ու ապրումները միավորում ու հաղորդում է տիեզերք՝ դառնալով նրա անբաժանելի մասնիկը: Մոր հանդեպ անօրինակ սերը Իշխանի հոգում է ու հաճախ հասնում է երկյուղած պաշտամունքի՝ դառնալով որդիական արբեցում: Նրա համար մայրը «անսպառ գանձարան» ու «մշտազանգ ավետիս» է, ով արթնացնում է կյանքը «կենսառույգ դարերում»՝

Բայց դուն մեր տունն ես ամբողջ, մեր անցյալին չափ անհուն,
Դուն անսպառ գանձարան և մշտազանգ ավետիս,
Դուն անծանոթ լուսաղբյուր մեր կենսառույգ դարերուն,
Որուն հատնում հորդաբուխ՝ եղավ աճումը կյանքիս[13]:

«Հայ մամիկին աղոթքը», «Իմ տուն, իմ մայր», «Մամիկը», «Մայրիկիս» և այլ քերթվածներում մայրական սերը նա միահյուսում է Հայաստանի պատկերին՝ կերտելով նրա «անուշնալու, սրբանալու, ավելի հայանալու» զարմանալի պոետական վիպասքը: Դրանցում հայրենիքի պատկեր-խորհրդանշանը Մուշեղ Իշխանը դարձնում է իր պոետական ճանապարհի գլխավոր բաղադրիչը, ու երբ մոր «խնկաբույր հոգին» խառնվում է պապերի «լուսապսակ սուրբ հողին», հողը «քիչ մ՝ավելի» է սրբանում:

Տուներգությունը

Մուշեղ Իշխանը չունի Սիամանթոյի երևակայությունն ու ողբերգականորեն հերոսական թանձրացումները, Վարուժանի պատկերավորման թափը, Թեքեյանի խոհափիլիսոփայական տարերքը, սակայն նա հայ գրականություն է բերում անվերջ անմար ու կրակոտ իր երազների անշփոթելի տուներգությունը՝ ստեղծելով ուրույն մի աշխարհ, որը իշխանական է: Մուշեղ Իշխանի «Տուներու երգը» (1936), «Կեանք ու երազ» (1949), «Ոսկի աշուն» (1963), «Տառապանք» (1968) ժողովածուները, «Հայաստան» (1946) պոեմը 20-րդ դարի հայ բանաստեղծության տիրույթում ապահովում են իրենց անշփոթելի և հաստատուն տեղը: Իշխանը չի ընդունում տարածականորեն մեծ այն երևույթները, որոնցից լռում-մարում-կորչում են սեր ու կարոտ, հավատ ու ոգի: Կյանքի հակադրություններն ու ներքին ճնշող զգացողությունները խորացնում են քերթվածների դրամատիզմը, իսկ ոչ նյութական, հոգևոր ձգտումների անկասելի հորձանքը լույս է ճառագում: Օջախ, տուն, կեցության հիմք - ահա Մուշեղ Իշխանի դավանանքը: Ոչ մեկը «տունները» չի երգել այնպես, ինչպես նա: Բախտի ցավոտ ճանապարհներին կյանքի հանգրվանը որոնող նրա քնարական կերպարի հոգում անթեղված է հային ծանոթ ու հարազատ կենտրոնաձիգ մի զգացում՝ կարոտը, որը հայ գրականության

[13] Իշխան Մուշեղ, Երկեր, Եր., «Նաիրի», 1990, էջ 181:

ամենատարածված թեմաներից է և որը Մուշեղ Իշխանի պոեզիայում ստացել է բոլորովին նոր, անկրկնելի որակներ: Հայոց լեզուն, Մասիսը, Հայ Տունը (տե՛ս «Նոր շինվող տունը», «Տան մը երազը», «Տուներ տարագիր», «Տան սեր», «Տուն մը», «Տանս կանչը», «Հովիտին տնակը», «Վաղվան տունը», «Ես Մասիսը չտեսա») քերթվածները վերածվել են հայրենաստեղծ ուրույն խորհրդանիշ-պատկերների: Մասիսը՝ իբրև կեցության հիմնաղբյուր, Իշխանի համար մնում է որպես անհաս բարձունք՝

Ես շառավիղ հայկազյանց, հայու ժպիտ, հայու լաց,
Մասյաց որդի հարազատ՝ ես Մասիսը չտեսա.
Իր կարոտով տոչորուն և իր կոչով արբեցած՝
Ես Մասիսը չտեսա…[14]:

Ընդհանրապես «տուն» ըմբռնումը Իշխանի պոեզիայում իմաստավորվում է խոհափիլիսոփայական, խորհրդանշական պատկերներով: Այն հատուկ շեշտադրումներ ունի: Նրա բանաստեղծական շարքերում տեսանելի է աշխարհի հոգսն առած, Մասիսը չտեսած ու կարոտած աշխարհասփյուռ հայը: Մուշեղ Իշխանը Մասիսը չտեսավ իր կեցության սփյուռքյան պայմանականությունների և կուսակցական պատկանելության պարտադրանքով. իրողություն, որ բնութագրական է ոչ միայն բանաստեղծի, այլև տասնյակ ու տասնյակ հազարների համար: Ուրեմն՝ նրա քերթված(ներ)ը մեծ հավաքականությունների հոգեկան ու հոգևոր տագնապներն են: Նրա տողերում ահեղ ընդվզում ու խորին բողոք չկա, փոխարենը մարդկային մեծ ողբերգության ազդեցիկ ուժն է, որ վերածվում է ողբերգականորեն անանց մի պատմության՝ ասված «մեկ բերանից», բայց «եղեռնազարկ մի ամբողջ ազգի» անունից: Ու երբ բանաստեղծը հուսահատվում է իրականությունից, վերադառնում է դեպի լույսերով ողողված մանկության անանց հուշերը, գույների սիրահար նրա հոգին մինչև վերջին ակնթարթը կապված է մնում կյանքին՝ դարձյալ ու միշտ փրկություն ու մխիթարանք որոնելով հայրենական տան, հայրական ու մայրական սերերում, որոնց արթնացումն է Մուշեղ Իշխանի երգածը՝ մանկության ջերմ օրերի երազը, որոնումը, կարոտն ու սպասումը՝

Օրո՛ր, տղա՛ս, օրոր ըսեմ, քնանաս,
Համբույրիս տակ փակես աչքերդ ու բանաս,
Քունդ ոսկի երազներով քաղցրանա,
Կյանքդ ամբողջ շքեղ երազ մը դառնա[15]:

[14] Իշխան Մուշեղ, Երկեր, Եր., «Նաիրի», 1990, էջ 164:
[15] Իշխան Մուշեղ, Երկեր, Եր., «Նաիրի», 1990, էջ 164:

Մոր և տան խորհրդանիշերը Իշխանի քերթվածներում փոխներ-ձուլված են՝ իբրև հավերժական գոյություններ: Դրանցում հայ տունը կենդանի է, առողջ՝ որպես կյանքն իր մեջ կրող յուրօրինակ բանաձև: Դժվար է նշել մեկ այլ հեղինակի, որ այսքան խորը իմաստավորած լինի «տան» գաղափարը ու երգը մերձեցրած լինի մեղեդու[16]:

Մեսրոպյան ոսկեղենիկ լեզվին նվիրված նրա բանաստեղծություն-ները հեռու են պաթոսից, բարձրագոչ հայրենասիրական երդումներից ու հավաստումներից: Նրա գործերում խոհականության տարերքը ներձույլ է հայրենասիրության հավասարակշիռ զգացումին, և սիրտն ու միտքը համաչափ են բաբախում:

Հայ լեզուն տունն է հայուն աշխարհիս չորս ծագերուն,
Որ կը մտնե ամեն հայ իբրև տանտեր հարազատ,
Կստանա սեր ու սնունդ, սրտի հպարտ ցնծություն,
Եվ բորյանեն ու բուժեն հոն կը մնա միշտ ազատ[17]:

«Հայ լեզուն տունն է հայուն» արտահայտությունը կարող է բնաբան դառնալ Իշխանի ստեղծագործությանը, գրական ողջ ճանապարհին, քանզի հստակեցնում է բանաստեղծի գեղագիտական ընկալումները: Իշխանը ստեղծում է անանձնական իր աշխարհը, որը թե՛ տեսլային է, թե՛ իրական ու շոշափելի: Այդպիսին է կորցրած տան մորմոքով ապրող Իշխանի քնարական կերպարը՝ հայ գաղթականը, որ կյանքից երազ ու երազից կյանք անվերջ որոնումներում չի գտնում անհրաժեշտ սահմանագիծը՝ «կյանքն իր երազ մը եղավ, ինչպես երազի՝ իրեն կյանք»[18]:

Եզրակացություն

Իշխանը բացահայտում է մարդկային հոգին փոթորկող հույզերը, հասնում կյանքի ու մահվան, բնության ու հայրենիքի, իրականի ու տեսիլքի գաղափարներին՝ առանց ավելորդ հռետորաբանության: Նրա քերթվածներում տիրապետողը սիրո, նվիրումի, մարդկային կյանքի ու մահվան փիլիսոփայական ընկալումներն են՝ լեզվի, կորուսյալ հայրենիքի, պատմական կոթողների միասնական շղթայում, որոնք միավորվում են անցյալի տառապանքին, դառնում արվեստ ու իրացվում իբրև հուշ և ոգեկոչում: Հայի ողբերգական ճակատագիրը, սփյուռքի հայության

[16] Պատահական չէ, որ Մուշեղ Իշխանի բազմաթիվ բանաստեղծություններ երգի են վերածվել Արթուր Մեսչյանի կողմից:
[17] Նույն տեղում, էջ 2 6:
[18] Նույն տեղում, էջ 118:

գոյավիճակը, հայապահպանության հարցերը տարակերպ արձագանքներ են գտել նրա բանաստեղծություններում: Հայրենի հողից կտրված հայ տարագիր կյանքը Իշխանի բանաստեղծության գլխավոր թեմաներից է: Այս համատեքստում ուշագրավ է նրա «Ալևոր պանդուխտ» քերթվածը, որը ոչ միայն բանաստեղծական հարցադրումների ու զգայությունների տիրույթում է, այլև՝ դիպաշարի: Այս ու նման ապրումների ու պահերի նկարագրության մեջ է Մուշեղ Իշխանի կենսականության խորհուրդը: Ոճի ու կառուցվածքի պարզության մեջ խորհուրդներ պահելու արվեստը թելադրվում է Իշխանի բանաստեղծությունների խորությամբ: Նրա քերթվածները հարուստ են խորհրդանշական պատկերներով, գույներով ու գյուտերով: Տիրական է նրա՝ մարդկային հոգու գաղտնագրված խորքերը և ներքին գանձերը տեսանելի դարձնելու շնորհը, թեպետ երբեմն խոսքի տարածականության, հակիրճության ու խտության (խմբագրման) հարցեր ուներ լուծելու: Իշխանի քերթվածները մարդու ներքին տագնապները բացահայտելու և վերլուծելու հրաշալի միջոցներ են: Ուստի նրա՝ որպես գրողի հավատամքը նաև սեփական ինքնության, պատմության ու հավերժական գոյության գիտակցությունն է:

Наира Амбарцумян

Мушег Ишхан - поэт

Резюме

В литературе армянской диаспоре свое особое место занимает поэт Мушег Ишхан. Внутренняя архитектоника в его стихах подчеркивает образ армянина-эмигранта, который борется против отчуждения и добивается осуществления национальных и общечеловеческих ценностей и идеалов. При рассмотрении пределов антропологической и генетической установок этого образа выявляется также основа антрополого-эстетических поисков Мушега Ишхана. В душе Ишхана-поэта бережно хранится также тоска по матери. Чтобы родная земля стала более мудрой и осмысленной, чтобы народ сражался за родную землю она должна сосредоточить в себе все материнские реликвии. Эта идея, помимо того, что является сама по себе открытием, вместе с тем становится символом веры для Ишхана-поэта, так как его сыновья тоска имеет предысторию в его раздвоенной судьбе. В поэтических циклах Ишхана виден также образ рассеянного по всему свету армянина, взвалившего мировое бремя на свои плечи, не видевшего Масис и тоскующего о нем, который находится в поисках собственного дома. В его строках нет грозного негодования и глубокого протеста, вместо этого ощущается влиятельная сила величайшей человеческой трагедии, которая

становится непреходящей трагической историей, рассказанной “из одних уст”, но от имени “целого народа, сотрясенного резней”.

Naira Hambardzumyan

Mushegh Ishkhan - the poet

Summary

The poet Mushegh Ishkhan has a special place in the literature of the Armenian diaspora. The internal architectonics of his poems emphasizes the image of an Armenian emigrant who fights against alienation and achieves the realization of national and universal values and ideals. When considering the limits of the anthropological and genetic attitudes of this image, the basis of the anthropological and aesthetic searches of Mushegh Ishkhan is also revealed. Ishkhan the poet also cherishes longing for his mother. And in order for the homeland to become wiser and more meaningful, to fight for their homeland, then it must summarize all the maternal relics. Apart from being a discovery, this idea is also a symbol of faith for Ishkhan the poet , since his sons longing has a background in his bifurcated fate. In the poetic cycles of Ishkhan, one can also see the image of an Armenian scattered all over the world, who has shouldered the world's burden on his shoulders, who has not seen Masis and is yearning for him, who is in search of his own home. In his lines there is no formidable indignation and deep protest, instead, the influential force of the greatest human tragedy is felt, which becomes an enduring tragic story, told “from one mouth”, but on behalf of “a whole people shaken by the massacre.”

Խմբագրություն է ուղարկվել 02. 12. 2021թ.
Հանձնարարվել է գրախոսության 18. 12. 2021թ.
Տպագրության է հանձնարարվել 16. 09. 202